ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՎԱՀԱԳՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Արտադրության եղանակի երկու կողմերի՝ արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների, կենտրոնական տարրը և կապող օղակը մարդն է։ Աշխատանքային հմտությամբ ու փորձով օժտված մարդը անհատ, աշխատուժ, արտադրության անձնական կամ սուբյեկտիվ գործոն հասկացությունների միասնություն է։ Մարդն ամենից առաջ որոշակի սոցիալական հարաբերությունների արդյունք է, հասարակության սոցիալական միավոր, անհատ։ Նրա բնորոշ գծերը բազմազան են. դրանք ընդգրկում են նրա ֆիզիկական և հոգևոր ընդունակությունները, հոգեբանության ու խառնվածքի բնորոշ գծերը և այլն։

Աշխատուժը[1] *(աշխատելու ընդունակությունը) անհատի գլխավոր հատկությունն է։ Ինչպես նշել է Կ. Մարքսը, «Աշխատուժ կամ աշխատունակություն ասելով մենք հասկանում ենք ֆիզիկական և հոգևոր այն ընդունակությունների ամբողջությունը, որ ունի մարդու օրգանիզմը, նրա կենդանի անձնավորությունը և որ նա գործադրում է ամեն անգամ, երբ որևէ սպառողական արժեք է արտադրում»*[2]*։ Կապիտալիստական արտադրության պրոցեսը և արտադրության գործոնները վերլուծելիս Կ. Մարքսը գրել է. «Աշխատուժի սպառումը հենց ինքը աշխատանքն է։ Աշխատուժի գնորդը գործադրում է այդ աշխատուժը, նրա վաճառորդին հարկադրելով աշխատել։ Վերջինը դրա հետևանքով* actu *(փաստորեն) դառնում է ինքն իրեն կիրառող աշխատուժ, բանվոր, մինչդեռ առաջ նա բանվոր էր միայն* potentia *(պոտենցիալ կերպով)»*[3]*։ Այս քաղվածքից հստակ երևում է, որ աշխատուժը որպես պոտենցիալ ունակություն և որպես իրական աշխատուժ կամ արտադրության անձնական գործոն նույնական չեն։ Առաջինը մարդու աշխատելու ընդունակությունն է, իսկ երկրորդը՝ իրական կիրառվող աշխատուժ է։ Մարդը, որ դիտվում է միայն որպես աշխատուժի կրող՝ բնության էակ է, նրա մի՝ գիտակից մասը։ Սակայն մարդու աշխատելու ընդունակությունն ինքնին տնտեսական հետազոտությունների օբյեկտ չէ։ Քաղաքատնտեսության ուսումնասիրության որոշակի օբյեկտ է այդ ընդունակության կիրառման միայն հասարակական ձևը, հասարակական կառուցվածքը, այլ կերպ՝ մարդկանց փոխհարաբերություններն ըստ հասարակական աշխատանքին նրանց մասնակցության։*

---

1 *«Աշխատուժ» հասկացությանն առաջին անգամ հանդիպում ենք Դ. Ռիկարդոյի մոտ* (Д. Рикардо, Сочинения, т. I, М., 1955, с. 180). *Սակայն Դ. Ռիկարդոն ևս իր նախորդների (Վ. Պետտի, Ա. Սմիթ) նման մարդու աշխատելու ընդունակությունը նույնացնում էր աշխատանքի հետ։ Մինչդեռ «աշխատունակությունը դեռ աշխատանք չէ, ճիշտ այնպես, ինչպես որ մարսելու ընդունակությունը դեռ փաստական մարսում չէ» (Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, Երևան, 1954, էջ 184)։*

2 *Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, էջ 178։*

3 *Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, էջ 188։*

Հասարակական ձևի տեսանկյունից աշխատուժն արտահայտում է աշխատելու ընդունակությամբ օժտված անհատի և հասարակության կամ նրա առանձին խմբերի միջև գոյություն ունեցող հարաբերությունները, որոնք առաջանում են այդ ընդունակությունն իրացնելիս։

Աշխատուժի մարքսյան բնորոշումից բխում է, որ քաղաքատնտեսության ուսումնասիրության օբյեկտ լինելու համար անհրաժեշտ է, որպեսզի անհատն ունենա ֆիզիկական և հոգևոր ընդունակություններ, այսինքն՝ աշխատունակ լինի, որպեսզի իր այդ ընդունակությունն օգտագործի արտադրության մեջ։ Վերջին հատկանիշը սոցիալական մոմենտ մուծելով աշխատուժի բնորոշման մեջ, էապես սահմանափակում է այն կրողների շրջանակը, քանզի աշխատուժի կրողներ են միայն նրանք, ովքեր իրենց սոցիալական դրության հետևանքով պարտավոր են աշխատել։ Սրանից հետևում է, որ չնայած հասարակության յուրաքանչյուր անդամ օժտված է որոշակի ֆիզիկական և հոգևոր ընդունակությունների ամբողջությամբ, այնուամենայնիվ, հասարակական արտադրության պրոցեսից դուրս այդպիսի ամբողջությունը աշխատելու լոկ ձևական ընդունակություն է և բնավ աշխատուժ չէ։ Այդ պատճառով էլ հակամարտ դասակարգային հասարակություններում շահագործող դասակարգերի ներկայացուցիչները աշխատուժի կրող չեն կարող լինել նույնիսկ այն դեպքում, երբ նրանք օժտված են անթերի աշխատունակությամբ, ավելին, անդամ, եթե աշխատում են, որովհետև նրանց աշխատանքային գործունեությունը սոցիալական դրությամբ չի պայմանավորված։ Մինչդեռ բանվորը, նույնիսկ գործազուրկը, անպայմանորեն այդպիսին է։ Ուստի աշխատուժը ոչ թե ֆունկցիոնալ, այլ սոցիալ-դասակարգային հասկացություն է և պայմանավորված է հասարակության սոցիալական կառուցվածքով, իսկ վերջինս յուրաքանչյուր հասարակությանը հատուկ՝ աշխատողների և չաշխատողների կամ աշխատանքի համընդհանրության համակարգ է։

Սոցիալիզմի պայմաններում աշխատուժը հանդես է գալիս երկու ձևով՝ մի կողմից, որպես առանձին աշխատողի ֆունկցիա, այսինքն ունի անհատական կամ առանձին հասարակական հատկություն (անհատական աշխատուժ), մյուս կողմից՝ որպես միավորված արտադրողի ֆունկցիա, այսինքն ունի հասարակական ամբողջական հատկություն (ամբողջական աշխատուժ)։ Ինչպես անհատական, այնպես էլ ամբողջական աշխատուժն ունեն վերացարկված որակական ու քանակական բովանդակություն[4] և միայն դրանով հնարավոր չէ անհրաժեշտ համամասնություններ սահմանել նյութական արտադրողական ուժերի և գլխավոր արտադրողական ուժի միջև, որոշել ամբողջ երկրի և առանձին տնտեսական շրջանների, ճյուղերի՝ համապատասխան որակի ու քանակի աշխատուժի նկատմամբ ունեցած պահանջը, արտադրության զարգացման հիմնական ուղղությունները։ Այդ նպատակով օգտագործվում են աշխատանքային ռեսուրսները[5]։ Դրանք օգտագործվում են նաև կապիտալիստական

[4] Աշխատուժի վերացարկված որակական բովանդակության տակ հասկանում ենք աշխատողների ընդունակությունների, դիտելիքների, ունակությունների, իսկ վերացարկված քանակական բովանդակության տակ՝ աշխատունակությամբ օժտված անձանց ամբողջությունն ընդհանրապես։

[5] Սոցիալիստական հասարակարգում աշխատուժը դադարում է ապրանք լինելուց, սակայն դրանից բոլորովին էլ չի հետևում, ինչպես կարծում են սովետական որոշ տնտեսագետներ, թե աշխատուժին փոխարինում է աշխատանքային ռեսուրսներ հասկացությունը։ Այդ մասին տե՛ս П. П. Литвяков, Н. К. Тяпкин, Общественный труд и его производительность, М., 1961, с. 10.

երկրներում։ Ժամանակակից կապիտալիստական հասարակության մեջ աշխատանքային ռեսուրսներ հասկացությանն ամենից ավելի մոտ են կանգնած ինքնագործ բնակչություն, տնտեսապես ակտիվ բնակչություն հասկացությունները։ Այսպես, օրինակ, Ամերիկայի Միացյալ Նահանգների վիճակագրությունը տարբերում է աշխատանքային ռեսուրսներ, տնտեսապես ակտիվ բնակչություն, աշխատուժ-ինքնագործ բնակչություն հասկացությունները։ Ամերիկյան վիճակագրությունը աշխատանքային ռեսուրսներ է համարում 14 և ավելի տարեկան բոլոր աշխատունակներին, այդ թվում՝ զինված ուժերում գտնվողներին և գործազուրկներին։ Տնտեսապես ակտիվ բնակչության (16 և ավելի տարեկան անձինք), այսինքն եկամտի ինքնուրույն աղբյուր ունեցողների թվին, սեփական աշխատանքով ապրողների հետ միասին (բանվորներ, ծառայողներ, մանր ապրանքարտադրողներ և այլն), դասվում են նաև խոշոր ձեռնարկատերերն ու սեփականատերերը, մասնակի կամ լրիվ գործազուրկները։ Աշխատուժ (ինքնագործ բնակչություն) են համարվում 20—64 տարեկան վարձու աշխատողները։

Աշխատուժի և աշխատանքային ռեսուրսների կապի վերաբերյալ սովետական տնտեսագիտական գրականության մեջ կան բազմաթիվ տեսակետներ։ Սովետական որոշ տնտեսագետներ գտնում են, որ աշխատանքային ռեսուրսներ հասկացությունն ավելի լայն է, քան աշխատուժը, քանի որ այն ներառում է հասարակության ոչ միայն գործող, այլև պահեստային աշխատուժը[6]։ Հեղինակների մի այլ խումբ, ընդհակառակը, աշխատուժը համարում է ավելի լայն հասկացություն, քան աշխատանքային ռեսուրսները, քանի որ աշխատուժով օժտված լինելը աշխատանքային ռեսուրսներ դառնալու նախապայման է[7]։ Ըստ երրորդ խումբ տնտեսագետների, աշխատանքային ռեսուրսներ և աշխատուժ հասկացությունները գործնականում նույնական են[8]։ Սովետական հայտնի տնտեսագետ Ա. Կոտլյարի կարծիքով էլ «սոցիալիզմի պայմաններում աշխատուժը և աշխատանքային ռեսուրսները համընկնում են, մինչդեռ հակամարտ դասակարգային հասարակություններում աշխատանքային ռեսուրսները միշտ քիչ են աշխատուժից, որովհետև վերջինիս կազմում կան նաև չաշխատողներ»[9]։

ՍՍՀՄ պլանավորման և վիճակագրության պրակտիկայում աշխատանքային ռեսուրսներ է համարվում աշխատունակ տարիքում գտնվող և անաշխա-

---

[6] И. М. Мусатов, Социальные проблемы трудовых ресурсов в СССР, М., 1967, с. 84; П. О. Косяков, Трудовые ресурсы—экономическая категория, Свердловск, 1970, с. 8, 10; Б. Л. Цыпин, Рабочая сила и ее особенности в период развитого социализма, Свердловск, 1978, с. 14.

[7] Е. Касимовский, Трудовые ресурсы, их формирование и использование в СССР («Экономические науки», 1973, № 7, с. 8, 9), Վ. Ե. Խոշաբեկյան, Հայկական ՍՍՀ բնակչությունը և աշխատանքային ռեսուրսների վերարտադրության արդի պրոբլեմները, Երևան, 1976, էջ 137, 138։

[8] М. Я. Сонин, Актуальные проблемы использования рабочей силы в СССР, М., 1965, с. 3; Е. С. Лазуткин, Проблемы повышения эффективности труда и производства («Проблемы повышения эффективности использования трудовых ресурсов», вып. 3, М., 1978, с. 39).

[9] А. Котляр, Воспроизводство рабочей силы при социализме («Экономические науки», 1972, № 4, с. 33).

տունակ տարիքի, բայց հանրային տնտեսության մեջ զբաղված մարդկանց ամբողջությունը, բացառությամբ շաշխատող հաշմանդամների և արտոնյալ պայմաններով թոշակի անցածների[10]։ Որոշ հեղինակներ աշխատանքային ռեսուրսների սահմանման հիմքում դնում են վերոհիշյալ բնորոշումը։ Օրինակ. Վ. Կուրեղյանը գրում է, որ «սոցիալիստական հասարակարգի աշխատանքային ռեսուրսները աշխատանքային տարիքում գտնվող աշխատունակ բնակչությունն է՝ անկախ զբաղմունքի տեսակից և ոչ աշխատանքային տարիքի՝ այն անձինք, որոնք մասնակցում են հանրային աշխատանքին՝ իրենց դեմոգրաֆիկ բնութագրությամբ[11]»։

Աշխատանքային ռեսուրսների քանակական կազմը որոշող մարդկանց աշխատունակության սահմանները՝ կախված արտադրության եղանակից և այլ գործոններից, տարբեր են։ Կապիտալիստական արտադրական հարաբերությունների պայմաններում աշխատունակության ստորին տարիքային սահմանը, որը բուրժուական շատ երկրներում 14-ն է, որոշվում է կապիտալիստական արտադրության շահերով, աշխատուժի կապիտալիստական շուկայի մեխանիզմով (չէ որ երիտասարդության այդ կոնտինգենտը մատակարարում է առավել էժան աշխատուժ), պատանիների մի զգալի մասի միջնակարգ կրթություն ստանալու անհնարինությամբ և այլ սոցիալ-տնտեսական գործոններով։

ՍՍՀՄ-ում աշխատանքային տարիքի ստորին սահմանը 16-ն է։ Այդ սահմանը մի կողմից հաշվի է առնում մարդու ֆիզիոլոգիական զարգացման հնարավորությունները, իսկ մյուս կողմից պայմանավորված է պատանիների ու աղջիկների՝ ոչ պակաս, քան ութամյա կրթություն ստանալու հանդամանքով[12]։

Աշխատունակ տարիքի վերին սահմանն ավելի մեծ չափով, քան ստորինը, սահմանվում է արտադրության եղանակի բնույթը որոշող գործոնների, դրանցով պայմանավորված կյանքի և աշխատանքային ժամանակաշրջանի միջին տևողության մեծացման ազդեցության տակ։

Կապիտալիստական հասարակությունը շահագրգռված է բանվորին ավելի երկար տարիներ որպես աշխատամեքենա օգտագործելու մեջ։ Այսպես, օրինակ, ԳՖՀ-ում և Բելգիայում թոշակի անցնելու տարիքը կանանց համար սահմանված է 60, տղամարդկանց համար՝ 65 տարեկան, ԱՄՆ-ում՝ համապատասխանաբար 62 և 65 տարեկան, Շվեդիայում այդ տարիքը երկու սեռերի ներկայացուցիչների համար էլ 67 է, Կանադայում՝ 70 և այլն։

Սոցիալիզմի օրոք աշխատունակության վերին տարիքային սահմանը

---

10 «Методические указания к разработке государственных планов развития народного хозяйства СССР», М., 1974, с. 366.

11 Վ. Ա. Կուրեղյան, Հայկական ՍՍՀ աշխատանքային ռեսուրսների օգտագործումը արդի փուլում, Երևան, 1978, էջ 27։

12 Զարգացած սոցիալիզմի պայմաններում գիտատեխնիկական հեղափոխության ծավալումը, դրանով պայմանավորված տասնամյա պարտադիր ուսուցման անցումը, պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնարանների և տեխնիկումների ցանցի ընդլայնումը, աշխատողների որակական մակարդակի, ուստի նաև ուսման տարիների անշեղ աճը պահանջում են աշխատանքային ռեսուրսների ստորին տարիքային սահմանը դարձնել 18—20 տարեկանը։ Այդ կարծիքին են նաև մասնավորապես Ե. Կասիմովսկին և Վ. Կուրեղյանը («Трудовые ресурсы: формирование и использование», под ред. Е. В. Касимовского, М., 1975, с. 11; «Материалы Всесоюзной научной конференции по проблемам народонаселения Закавказья». Ереван, 1968, с. 120)։

տարբերվում է կապիտալիզմի պայմաններում ձևավորվածից։ ՍՍՀՄ-ում և մյուս սոցիալիստական երկրներում չնայած այն բանին, որ մարդու կյանքի միջին տևողությունը աճում է ավելի արագ տեմպերով, քան կապիտալիստական երկրներում, աշխատունակ տարիքը և՛ կանանց, և՛ տղամարդկանց համար սահմանված է ավելի ցածր։ Օրինակ, ՍՍՀՄ-ում, ԲԺՀ-ում, ՀԺՀ-ում և ՄԺՀ-ում այն համապատասխանաբար 54 և 59 տարեկանն է, ԳԴՀ-ում և ԼԺՀ-ում՝ 59 և 64, ՌՍՀ-ում՝ 56 և 61, ՉՍՍՀ-ում՝ 53 և 59 տարեկանը։

Աշխատանքային ռեսուրսների վերին տարիքային սահմանը նույնպես պայմանական է. ներկայումս այն որոշվում է թոշակառու տարիք մուտք գործելով։ Սակայն այդ շրջանակներն իրենց ռեալ բովանդակությամբ աշխատանքային ռեսուրսների վերին տարիքային սահման չեն կարող դիտվել, քանի որ այդ տարիք թևակոխելն աշխատունակության պարտադիր կորուստ չի նշանակում և աշխատանքի իրավունքը չի սահմանափակում։ Այսպես, մեղանում 60—65 տարեկան տղամարդկանց և 55—60 տարեկան կանանց ճնշող մեծամասնությունը ցանկանում է շարունակել աշխատանքային գործունեությունը, եթե պահպանվի կենսաթոշակի լրիվ չափը։ Իր հերթին սոցիալիստական պետությունը նյութապես և բարոյապես խթանում է թոշակառուների այն մասի աշխատանքը, որի ֆիզիկական վիճակը դեռևս թույլ է տալիս շարունակել աշխատանքը՝ հատկապես նյութական արտադրության ոլորտում։ Ուստի, աշխատանքային ռեսուրսների վերին տարիքային սահմանը չի կարելի կապել թոշակառու տարիքի հասնելու հետ. այն կարող է բարձր լինել այդ տարիքից։

Այսպիսով, աշխատանքային ռեսուրսները բաց համակարգ են. նրանց և՛ ստորին, և՛ վերին տարիքային սահմաններն ունեն զուտ պայմանական, ձևական բնույթ, քանի որ աշխատունակության բնականոն սահմանները որոշվում են ոչ միայն և ոչ այնքան կենսաբանական գործոնով, որքան սոցիալ-տնտեսական գործոնների ամբողջությամբ։ Արտադրության զարգացման ձեռքբերված աստիճանը, ժողովրդական տնտեսության ճյուղային կառուցվածքը, բնակչության նյութական և կուլտուրական մակարդակը, գիտատեխնիկական հեղափոխությունը, արտադրական հարաբերությունների ամբողջությունն անմիջականորեն ազդում են մարդու ֆիզիկական և հոգևոր զարգացման վրա, ձևավորում աշխատունակության սահմանները։ Հետևապես, աշխատունակ տարիքի իրավական սահմանները չեն կարող ամբողջությամբ բնութագրել աշխատանքային ռեսուրսների տնտեսական էությունը։ Մինչդեռ մի շարք հեղինակներ դա անտեսելով, աշխատանքային ռեսուրսները դիտում են որպես զուտ քանակական, ֆունկցիոնալ հասկացություն[13]։ Հասարակական արտադրությունը տնտեսական հարաբերություն է, իսկ աշխատանքային ռեսուրսներն արտացոլելով այդ հարաբերությունները, չեն կարող սոցիալ-տնտեսական հասկացություն չլինել[14]։

---

[13] Н. М. Еремина, Б. П. Маршалова, Статистика труда, М., 1965, с. 24; В. В. Семененко, Совокупная рабочая сила при социализме (автореферат канд. дисс.), М., 1967, с. 6.

[14] Սովետական որոշ տնտեսագետներ գտնում են, որ աշխատանքային ռեսուրսները քաղաքատնտեսության կատեգորիա չեն, որ դրանց բնութագիրը տալիս են դեմոգրաֆիան, տնտեսական աշխարհագրությունը և այլ գիտություններ (այդ մասին տ՛ես П. П. Литвяков, Н. К. Тяпкин, նշվ. աշխ., էջ 30, Б. Г. Рубин, Воспроизводство рабочей силы высшей квалификации, Ростов-на-Дону, 1975, с. 94).

Աշխատանքային ռեսուրսները որակական և քանակական որոշվածությամբ աշխատուժն են և արտահայտում են աշխատելու ընդունակության վերարտադրության կապակցությամբ ծագող հարաբերությունների ամբողջությունը։ Աշխատանքային ռեսուրսների սոցիալ-տնտեսական բովանդակությունը համապատասխանում է աշխատուժի բովանդակության սահմանմանը։ Տարբերությունը լոկ այն է, որ աշխատուժի որակական և քանակական բնութագիրը վերացարկված է, իսկ աշխատանքային ռեսուրսներինը՝ կոնկրետ։ Աշխատանքային ռեսուրսները աշխատուժի (բովանդակության) արտահայտման կոնկրետ ձևն են։

Ինչպես և աշխատուժը, աշխատանքային ռեսուրսները նույնպես կարելի է և պետք է դիտել պոտենցիալ ու իրական առումով։ Սոցիալիստական հասարակության պոտենցիալ աշխատանքային ռեսուրսներն իրենց կազմի մեջ միավորելով աշխատունակությամբ օժտված մարդկանց, արտահայտում են աշխատանքի նկատմամբ հասարակական ամբողջական ընդունակությունը։ Իրական աշխատանքային ռեսուրսները աշխատող մարդկանց ամբողջությունն են՝ անկախ աշխատանքի կիրառման կոնկրետ տեղի ընտրությունից (արտադրության հանրայնացված և չհանրայնացված սեկտորներ, նյութական և ոչ նյութական արտադրության ոլորտներ)։ Այսպիսով, պոտենցիալ և իրական աշխատանքային ռեսուրսների միջև եղած տարբերությունը զուտ քանակային է, դա տարբերություն է աշխատանքին մասնակցելու հնարավորության և գործնական մասնակցության միջև։

Իրական աշխատանքային ռեսուրսները իրենց հերթին ըստ աշխատանքի կիրառման տեղի, ՍՍՀՄ էկոնոմիկայի զարգացման օբյեկտիվ պայմանների ազդեցության տակ, բաժանվում են՝ 1) հանրային արտադրության մեջ (հանրայնացված սեկտոր) զբաղվածների, 2) տնային և անձնական օժանդակ տնտեսության մեջ (չհանրայնացված սեկտոր) զբաղվածների։ Պայմանականորեն երրորդ խումբ կարելի է համարել ուսման տարբեր ձևերում ու համակարգերում ընդգրկված աշխատունակներին, այն վերապահումով միայն, որ աշխատանքն ու ուսումը համատեղող, տնտեսության հանրայնացված և չհանրայնացված սեկտորներում ընդգրկված անձինք իրական, իսկ արտադրությունից կտրված սովորողները՝ պոտենցիալ աշխատանքային ռեսուրսներ են։

Ըստ ընդգրկման ոլորտի, աշխատանքային ռեսուրսները ստորաբաժանվում են նյութական և ոչ նյութական արտադրության ոլորտներում զբաղվածների։ Այս կապակցությամբ նշենք, որ համաձայն չենք այն հեղինակների հետ, որոնք աշխատուժը քննելով որպես բացառապես նյութական բարիքների արտադրության հետ կապված հասկացություն, պնդում են, թե աշխատանքային ռեսուրսները բաղկացած են աշխատուժից և ոչ արտադրական ոլորտի աշխատողներից[15]։ Մեր կարծիքով, այդ երկու ոլորտներում զբաղվածների միջև եղած տարբերությունն ընդգծելու համար պետք է առաջնորդվել նրանով, որ նյութական արտադրության ոլորտում զբաղված աշխատանքային ռեսուրսներն արտադրողական ուժերի անկապտելի տարր են, իսկ ոչ նյու-

[15] В. В. Чембровский, Проблема занятости в социалистическом обществе, Кишинев, 1973, с. 56; Е. С. Русанов, Вопросы теории народнохозяйственной эффективности использования трудовых ресурсов («Проблемы повышения эффективности использования трудовых ресурсов», с. 24, 25).

թական արտադրության ոլորտում զբաղվածները՝ ոչ։ Միաժամանակ, այդ երկու ոլորտներում զբաղվածների հարաբերակցությունը հասարակական աշխատանքի արտադրողականության մակարդակի որոշման կարևոր ցուցանիշ է, որովհետև արտադրողականի համեմատ ոչ արտադրական ընակչության ավելտնալը հասարակական աշխատանքի արտադրողականության հարաբերական բարձրացման արտահայտությունն է։

Անկախ այն բանից, թե որտեղ են ընդգրկված սոցիալիստական հասարակության աշխատանքային ռեսուրսները՝ նյութական, թե ոչ նյութական արտադրության ոլորտներում, հանրային արտադրության, անային կամ անձնական օժանդակ անտեսության մեջ, թե ուսման այս կամ այն ձևում, նրանք կապված են սոցիալիստական սեփականությամբ որոշվող անաեսական հարաբերությունների միասնական համակարգով, զբաղված են հանրօգուտ, հասարակությանն անհրաժեշտ գործունեությամբ։

СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОЕ СОДЕРЖАНИЕ ТРУДОВЫХ РЕСУРСОВ

ВААГН ТОВМАСЯН

Резюме

Трудовые ресурсы—качественно и количественно определенная рабочая сила—выражают совокупность отношений, возникающих в связи с реализацией способности к труду. Трудовые ресурсы—конкретная форма выражения рабочей силы (содержания).

Как и рабочая сила, трудовые ресурсы также могут быть как потенциальными, так и действительными. Потенциальные трудовые ресурсы социалистического общества, объединяя людей, наделенных способностью к труду, выражают общественную совокупную способность к труду. Действительные же трудовые ресурсы—совокупность работающих людей независимо от места приложения труда—в обобществленном или необобществленном секторе хозяйства, материальном производстве или непроизводственной сфере. Трудовые ресурсы, занятые в материальном производстве, являются неотъемлемым элементом производительных сил, занятые в непроизводственной сфере таковыми не являются.

Независимо от места вовлечения, трудовые ресурсы социалистического общества связаны единой системой экономических отношений, обусловленных социалистической собственностью, и заняты общественно полезной, общественно необходимой деятельностью.